խօսքերը· «Նե՛ղ է··· նե՛ղ է··· խեղդվո՛ւմ եմ»···

Երբեմն լեռնային գօտիների միաբանութիւնը խախտվում էր, բաժանվում էին միմեանցից, հեռանում էին միմեանցից եւ բաց էին անում նրա առջեւ լայն, ընդարձակ, տարածութիւն··· Այդ միջոցին նրա կամայականութիւնը չափ չունէր: Ազատուելով իւր նեղ կիրճից, մի չար վիշապի նման, անխնայ կերպով ողողում էր, յեղյեղում էր իւր հարթ, կանաչազարդ ափերը եւ կամ մի արբեցած հսկայի նման, երբեմն դէպի աջ էր թեքվում, երբեմն դէպի ահեակ էր խոտորվում···

Նա իւր ազատութիւնը խելացի կերպով վայելել չգիտէր: Ցանկարծ վիթխարի թեւերը բաց էր անում, խլում էր ցամաքից մի կտոր հող եւ, ճնշելով իւր զով գրկի մէջ, կղզիացնում էր նրան: Առժամանակ երեխայական սիրելութեամբ սկսում էր փայփայել եւ խնամել իւր խաղալիկը: Կղզին աճում էր··· աճում էին թուփերը, վառվում էին ծաղիկները: Երկնքի թռչունը հիւսում էր այնտեղ իւր բոյնը, վայրի անասունը սնուցանում էր այնտեղ իւր ձագուկներին: Կղզին ներկայացնում էր մի գեղեցիկ փունջ, որով զուարճանում էր նա եւ, պճնասէր երիտասարդի նման, զարդարում էր իւր հպարտ կուրծքը: Բայց յանկարծ կարծես ձանձրանում էր նա, ալիքները փրփրալով բարձրանում էին, կոհակները կատաղաբար մոնչում էին եւ մի քանի բոպէի մէջ կլանում էին գեղեցիկ զարդը եւ նրա հետքը անգամ չէր երեւում:

Հայոց գետերի թագաւորը վարվում էր իւր յօրինած կղզիների հետ նոյն կերպով, որպէս Հայոց երկրի թագաւորը վարվում էր իւր մէջ կղզիացած նախարարութիւնների հետ··· Երբ խորամանկ պարսիկը եւ նենգաւոր հռոմայեցին երկու լեռնային գօտիների նման միաբանուելով ճնշում էին նրան, այդ միջոցին նրա ճիչն ու բողոքը սահման չունէր: Իւր բոլոր կատաղութիւնը գործ էր դնում ազատուելու նրանց ճնշումից: Իսկ երբ երկու դաշնակիցները քանդում էին իրանց միաբանութիւնը, բաժանվում էին եւ նա ազատութիւն էր ստանում,— այդ միջոցին սկսում էր զբաղուել ներքին երկպառակութիւններով: Ամենայն անգթութեամբ ոչնչացնում էր իւր մէջ ամփոփուած նախարարութիւնները, որպէս հրէշաւոր Արաքսը լափում, կլանում էր իւր մէջ սեղմբուած կղզիները»:

Եւ ահա այդ կղզիներից մէկը — «Իշխանաց կղզին» — հողմի առեն.

«Կարմիր քամին խելագարի նման մռնչում էր, փոթորկվում էր, բարձրացնելով օդի մէջ թանձր աւազախառն փոշի: Մրրկածուփ հորիզոնը պատած էր մոյգ-աղիւսագոյն մռայլով, որ մթնեցնում էր արեւի երեկոյեան ճառագայթները: Քամու ուժգին հոսանքի ներքոյ՝ դալար թուփերը, փշալի մացառները հեծելով, հառաչելով, կպչում էին գետնին եւ դարձեալ վեր էին բարձրացնում իրանց հողմակոծ գլուխները: Մոլորուած, շփոթուած ծտերը հակառակ իրանց կամքի, տարվում էին օդի մէջ, որպէս բամբակի փոքրիկ պատառներ: Սրաթքոհիչ բազէն անգամ իւր ուժեղ թեւերով դժուարանում էր ընդդիմադրել զայրացած տարրի կատաղի ալիքներին: Մրրիկը հետզհետէ սաստկանում էր, մարդ եւ անասուն, սողուն եւ թռչուն թագչելու տեղ էին որոնում: Այդ միջոցին զարմացած Արաքսը խորին վրդովմունքով դուրս էր յարձակվում իւր ափերից տեսնելու, թէ ի՞նչ արհաւիրք է կատարվում իւր շուրջը: «Իշխանաց կղզին» դողում էր, սարսափում էր ամեհի կոհակներից, որ ամէն բոպէ պատրաստ էին կլանելու եւ անհետացնելու նրան»···

Հայոց բնութիւնը իւր բիւրաւոր դաղանիքներով, իւր առեղծուածային վեհութեամբ կախարդել է վիպասանին եւ նա մի տեսակ կրօնական երկիւղածութեամբ, պաշտամունքի զգացումով թափառել է ամենուրեք, դիտել է ամենուրեք, սահմանէն ասդին եւ անդին, ուշի ուշով ուսումնասիրել է լեռներն ու ձորերը, անանցանելի կիրճերը, հայոց դաժան ձմեռը, խորհրդաւոր գիշերները, փոթորիկը, կարաւանները լեռնակուտակ ձիւներու մէջ,— այլ եւ հայկական գարունը, հայոց վեհափառ արեւը, իւր դիւթիչ արշալոյսներով ու վերջալոյսով, կանաչազարդ եւ գեղածիծաղ դաշտերը··· Քանի՛ քանի անգամ իւր առեւտրական կամ ուխտաւորական թափօրներու ընթացքին, իւր հիւանդոտ աչքերով, խորունկ հոգեմայլու-